



Տարեկան գինն է . . . 140 դր.
Վեցամսեայ . . . 75 .
Եռամսեայ . . . 40 .
Մէկ քանուցումը տողին 3 դրուով է :
Ստորագրութիւնները կանխիկ են :
Ստորագրութիւնները ամեն ամսոյն 1 րէ
եւ 16 րէ կը սկսին :

Դուրս երթալից լրացիւններուն համար
ծախքը առնողին վրայ է :
Երազդոյս վերաբերեալ նամակ կամ որ
եւ ինչ գրութիւն, խմբագրին պիտի
ուղղուի . եւ անոնց համարուն ծախ-
քը խրկողին վրայ է :

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Խաղաղայի մէջ կատարված յեղափո-
խական մեծամեծ անցքերուն վրայ հասա-
րակաց հետաքրքրութիւնը յազնցընելիք
մանրամասն տեղեկութիւններ հասնիլ
սկսան այս շարժում :

Նաբոլի թագաւորը լատ. սեպտ. 6
ին մեկնեցաւ Նաբոլին՝ մէկնաբոլիսիան
եւ երկու սպանիական Ֆրգաթիւնով : Նո-
րին վեհապետութեան ծամբայ կլնելու
ժամանակը՝ իւր կառավարութեան պաշ-
տօնակալները շոգնաւաւ զացեր են հրաժա-
րական ողջոյն մատուցանելու իրենց վե-
հապետին, եւ մեկնելու ատենին երբոր
ձեռքը համբուրել ուղեր են, թագաւորը
ձեռքերն ետին տանելով՝ « չէ՛ Պարոններ,
ըսեր է, ձեր պատճառաւն է որ ես այս
գոժուար վեճակին մէջ կը գտնվիմ » :

Թագաւորին մեկնելուն հետեւեալ
օրը Վարիպալտի Նաբոլի մտաւ յաղթա-
կան հանդիսիւ : Երկու հարիւր կանայք՝
դաշնակցութեան զինեալ առնուէն կերթա-
լին քաղաքին փողոցներուն մէջ : Վարի-
պալտի բաց կառքի մը մէջ նստած էր,
եւ անթիւ ժողովուրդ կերթալին ետեւէն :
Բոլոր քաղաքն ուրախութեան մէջ էր .
երկը օր շարունակ հանդէս եւ զինեւեւ-
րեն ալ լուսաւորութիւն պիտի ըլլար :

Վարիպալտի զօրապետը Նաբոլի մը-
նելուն պէս՝ զինարաններուն մէջ գտած
բոլոր պատերազմական մթերքը Սարա-
նիայի թագաւորին նուիրեց, եւ կըսէր
թէ Վ. իւր թոր Լ. մանուէլ թագաւորն
ալ քանի մը օրէն Նաբոլի պիտի երթար :
Վրովի նաեւ թէ Վարիպալտի միայն ու-
նէր Վայեթիայի վրայ քաշելու, ուր ա-
պաստանած էր Նաբոլի թագաւորը :
Հրաման ըրաւ որ քաղաքական ազատու-
թեան համար դատաւարաւորաց բանտար-
կութեան տեղի եղած Սանթա Լիւսիայի
բերդը քանդուի, եւ ամեն քաղաքացի
այն բերդին աւերակներէն մէկ մէկ քար առ-
նեն պահէն՝ ի յիշատակ այս յեղափոխու-
թեան : Բերդին աւերումն արդէն սկը-
սած էր :

Վարիպալտի նաեւ հրաման իրեց
Մէլինայի բերդը պաշտպանող նաբոլի-
սիան զօրաց որ անձնատուր ըլլան : Հը-
րամանատարը յօժարամտութիւն ունէր
բերդը տալու, բայց զօրաց մեծ մասը
որ օտարազգի են՝ եւ թագաւորին Վա-
յեթիա երթալն ալ ստոյգ կերպով չէին
գիտեր, դէմ կեցան ու բերդը չտուին :
Վարիպալտի տան օր ժամանակ սուա-
կիւնց :

Այս բերդը՝ 900 թնդանօթով զին-

եալ է, եւ երկու տարուան պաշար ունի .
ուստի եւ պատերազմով առնելու համար
երկար ժամանակ եւ շատ արիւն հեղու-
թիւն կը պահանջէ . բայց տարակոյս չկայ որ մէջի
զօրքերն՝ իրենց պաշտպանած կառավա-
րութեան վերջած ըլլալուն համոզվին նե՛-
պարապ տեղը զիմադրութիւն չեն ընել
եւ բերդը կուտան :

Նաբոլի թագաւորին ընտանեաց բո-
լոր անդամները Նաբոլին մեկնեցան :
Իւր հօրեղայր Սիրակուսայի կոմսը՝ որ
յառաջադիմական եւ ազատամիտ գաղա-
փայններու ներկայացուցիչն էր իր եղբոր-
որդոյն քով, Սարաւիայի թուրքիս
մայրաքաղաքը դացեր է Վ. իւր Լ. մա-
նուէլ թագաւորին քով :

Սարաւիայի օգոստոս 31 թուով
լուր կուտան թէ Սպանիոյ թագուհին
հիւրընկալութիւն ընել առաջարկեց
Նաբոլի թագաւորին, եւ Սէվիլի պա-
լատն անոր բնակարան յատկացուցեր է :

Նաբոլին լատ. սեպտեմբեր 10 թը-
ւով եկած լուրերը կը ծանուցանեն
թէ Վարիպալտի զօրապետը՝ Սարա-
նիայի Վ. իւր թոր Լ. մանուէլ թագաւո-
րը բոլոր Խաղաղայի թագաւոր հրաժա-
րակեց է : Նաբոլի ժողովուրդն ու-
րախութեամբ ընդունել է Վարիպալտին
այս յայտարարութիւնը : Ուստի Նաբո-
լին արքունական շէնքերուն վրայ Սար-
աւիայի զօրապետը պարգեւով՝ 101 թը-
դանօթ արձակել է : Նաւատորմին ալ
Վարիպալտի յայտարարութիւնը սիրով
ընդունելի՝ բոլոր նաւերուն վրայ Սարա-
նիայի զօրապետը քաշվել է :

Ենթդոյ մէջ կարգէ դուրս համա-
րութիւն մը կայ Վարիպալտի եւ անոր
ձեռնարկութիւններուն վրայ : Ըմեն կողմ
ստակ կը հաւաքուի անոր իրեկելու հա-
մար, եւ հաղաւորութիւն տեսարկներ կա-
մաւոր զինուոր կը զրկին ու նաւերով
Սիւլիկա ու Նաբոլի կերթան : Հատուկ
թիւիւնով, հրացան եւ պատերազմական
մթերք կը խրկուին Վարիպալտին :

Խաղաղայի միւս մասերէն եկած լու-
րերն ալ խիստ կարեւոր են :

Հռոմի տէրութեան զօրքերուն հը-
րամանատար Լամորիսիէն զօրապետը որ
հիմա 30 հազար կ'անոնաւոր զօրք ու-
նի ձեռքին տակը, Հռոմի տէրութեան
սահմանները պահպանելու եւ դուրսէն
ըլլալից յարձակումները վանելու կը պա-
րաստուի : Յայտարարութիւն մը հրա-
տարակեր է, որուն մէջ հրաման կ'ընէ զօ-
րքիւն որ մեծ խտութեամբ բանեցընեն
այն քաղաքներուն դէմ որ Վարիպալտի
մօտեցած ժամանակը ապստամբին :

Սակայն վերջին լուրերը կը ծանուցա-

նեն թէ Հռոմի տէրութեան Սարաւիայէ,
Օմպրիա եւ Բէզարո գաւառներն ոտք ել-
լով՝ Սարաւիայի զօրապետը պարգեր են,
եւ պատգամաւորութիւն իրեկելով Սար-
աւիայի թագաւորին՝ անոր օգնութիւ-
նը խնդրել են :

Սարաւիայի թագաւորը առաջար-
կութիւն իրեկել է Վալին, թէ քանի որ
գաղղիական զօրքերն Հռոմ կեցած են
զինքը պաշտպանելու համար, ինքը ու-
րիշ օտարազգի զօրաց պէտք չունի, հե-
տեւաբար պէտք է որ անմիջապէս ձամբէ
Լամորիսիէն զօրապետին հրամանատա-
րութեան ներքեւ գումարված օտարազ-
գի զօրքերը՝ որոնք սպառնալիք մըն են
Խաղաղայի, ապա թէ ոչ՝ իր զօրքերը Հը-
ռոմի երկիրը պիտի մանեն ժողովուրդն
օգնութիւն ընելու համար :

Այս ազդարարութեան Հռոմի կա-
ռավարութիւնն ականջ չկոխելով, Սար-
աւիայի զօրքերն Հռոմի տէրութեան
երկիրը մտնել են՝ ապստամբեալ գաւառ-
ները զրոնելու համար :

— 0 —

Նաբոլի մէջ թիւերնուն մէջ ծա-
նուցեր էին, թէ Նաբոլի թագաւորին
հօրեղայր Սիրակուսայի կոմսը նամակ
մը գրել էր թագաւորին՝ եւ յորդորել էր
որ իր հպատակները լուծէ աւելնն ու-
նեցած հնազանդութեան պարտաւորու-
թիւնէն, եւ անոնց բազմին որոշումը ի-
րենց յանձնէ :

Հաւատարմի յիշեալ նամակին թարգ-
մանութիւնը :

Վ. Նաբոլի Տէր,
Թէ որ մեր թագաւորական տանը վրայ ե-
կած վտանգներուն առաջը առնելու համար ժա-
մանակաւ հանած ձայնս լսելի չեղաւ նե, թող
տուէր որ այսօր աւելի մեծ գոթազուծիւնե-
րու պատգամաբեր ըլլալով՝ մտա գտնէ ձեր սը-
տին մէջ, եւ անմախտաւ ու վնասաբեր խորհը-
րով մը նորէն չմեքծիմ :

Խաղաղայի պայմաններուն փոխիլը եւ ազ-
գային միութեան զգացումը որ Բալկանի անկ-
մանէն ետքի քանի մը ամիսներուն մէջ եւս աւե-
լի զօրացաւ, ձեր վեհապետութեան կառավա-
րութեանը ձեռքէն վերուցին այն զօրութիւնը
որ աւերութիւն կառավարելու համար հարկաւ
է, եւ Սարաւիայի հետ գաղափարութիւնն ան-
հար ըլլին : Վ. երբ Խաղաղայի ժողովուրդները
Սիւլիկայի շարքերուն լուրերն ստեղծած ըլլա-
լով՝ Նաբոլի գեապանները սրտովին մեքծեցին,
եւ մենք գոթազուծաբար զինուց բազմին
մնացին, միամիտ, առանց դաշնակցի, նշաւակ
ըլլալով ժողովուրդը ինքիմ առեկալ թեւեր, ու-
րոնք՝ մեր տանը բնաջնջը ընելու ձայնը լսելուն
պէս՝ Խաղաղայի ամեն կողմերէն ոտք ելան :

Ա. հիմա, քաղաքական պատերազմը որ
արդէն տէրութեան ցամաքային գաւառներուն
մէջ մտած է, անոնց հետ մեր թագաւորական
տունն ալ պիտի տանի ձգէ այն վերջին կործան-
ման խորտարարուն մէջ զոր շար խորհրդակցիւնե-
րու անօրէն խորամանկութիւնները երկար ժա-
մանակէ՛ն վեր պատրաստեցին Պարպանեան Վա-
րուս Վ. ին թուներուն : Բաղադրացեաց ար-

իւնը՝ անօրուտ տեղը թափվելով՝ տակաւին պիտի
տի ողորդէ տէրութեան քաղաքները, եւ դուք՝ օր
մը ժողովուրդեան յայն ու սիրելին՝ այս եղբայ-
րասպան պատերազմին միակ պատճառը սեպվե-
լով՝ ամենուն նողկալն պիտի ըլլար :

Վ. Նաբոլի Տէր, տակաւին ժամանակ կայ,
ազատեցէր մեր տունը բոլոր Խաղաղայի անէծքէն .
հետեւեցէր Բարմայի մեր արքայազուն ազգա-
կան դքսուհւոյն ազնիւ օրինակին, որ քաղաքա-
կան պատերազմը վրայ հասնելուն պէս՝ իր հը-
պատակները լուծեց հնազանդութեան պարտա-
ւորութենէ եւ զանոնք իրենց վեճակը որոշելու
տեղ ձգեց : Եւրոպա եւ ձեր ժողովուրդները չեն
մոռնար այս վեճակը : Եւ ան ժամանակը դուք,
վեհապետ Տէր, կըսեք ձեր ձախարակաւ զուտ
թեմաբ առ Լատուած վերջերեւ, որ ձեր վեհա-
պետութեան այս ազնուարարութեան գործն ան-
վարձ չթողուր : Ձեր սիրտը գոթազուծեան
մէջ փորձվելով հայրենաց ազնիւ դպրութեան
ունի կը բացվի, եւ դուք կ'օրհնէք այն օրը ուր
ինքզինքնիդ վեհապետաբար զհաւաք ըլլաք Խա-
ղայի մեծութեանը :

Այս քանի մը խօսքերով, վեհապետ Տէր,
իմ փորձառութեամբ վրաս դրված նախական
պարտաւորութիւն մը կը կատարեմ : Վաղանք
զԼատուած որ քեզ լուսաւորէ եւ իւր օրհնու-
թեանցը արժանի ընէ :

Ձերում վեհապետութեան ամենապիւր
հօրեղայր

ԼԵՈՒՈԼՏ, ԿՈՍՏ ՍԻՐԱԿՈՒՍԵՏԻ
Նաբոլի
1860 24 օգոստ.

— 0 —

Սարաւիայի սեպտեմբեր 3/15 թը-
ւով մայրաքաղաքս եկած հեռագրական
լուր մը կը ծանուցանէ թէ Սարաւիայի
զօրքերն Հռոմի երկիրը մտնելուն վրայ,
թուրքիսի ու Նաբոլի գաղղիական դե-
պանները մեկնել են : Այսու ամենայնիւ
կը կարծելիք ընդհանրապէս թէ Լատ-
ուս միջամտութիւն չընելու որոշմանը
վրայ հաստատ կը մնայ :

Նաբոլի թագաւորը Վայեթիայէն
Սպանիա դացիր է :

Նաբոլին կայսրը Սարաւիայէն
Քորսիկայի Լաբաթի քաղաքը դացեր՝
յաղթական հանդէսներով ընդունվել
է . անկէց ալ Նեպոլի դացիր է :

— 0 —

Լատուոյ կառավարութիւնը Վ. Նե-
տիկի վրայ յարձակումը դուշակելով
անգաղաք զօրք եւ պատերազմական մը-
թիւք կը խրկէ հոն եւ բերքիւնուն սպա-
ռազնութիւններն ու պաշտպանութեան
միջոցները կաւելցնէ : Ասկէց դատ Վ. Նե-
տիկի երկաթուղիները Գերմանիայի
երկաթուղիներուն կցիւր ճիւղը ժամ
առաջ ընցընելու կաշնատի :

Վ. ինչնայէն սեպտ. 3 թուով լուր
կուտան թէ Վ. Էրնայի մէջ յեղափոխա-
կան ժողով մը երեւան ելիւ, անդամնե-
րէն ոմանք եւ շատ ալ թուրքի բոնդիւր
են՝ որոնք Սարաւիայի տէրութեան վաղաք
զարմանալ տեղեկութիւններ կուտան
եղիւ :

— 0 —

Ուսումնական տարիները 15-20 տարին անհամար տեղում թողնելով, բոլոր ժողովուրդներուն աշխարհագիրը ընկնող սովորութիւն ունենալով, խորհրդի պատերազմէն ետեւ՝ որուն այնչափ մարդ զոհ գնաց՝ հրաման ըսաւ նոր աշխարհագիրը մը ընելու որն որ այս օրերս ընկնել է։

Այս նոր աշխարհագիրն նայելով, Ուսումնական բոլոր բնակչաց թիւն է՝ առանց ցեղի կարգի եւ վեճակի խտրութեան՝ 68 միլիոն 931 հազար 728 հոգի, որոց 33 միլիոն 655 հազար 824-ը այր եւ մնացեալը կին են։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նիւշէն եկած լուրերը կը ծանուցանեն, թէ բարձրագոյն Գրգորը Մէհմետ փաշան օգոստոս 14-ին դեռ հոն կը գտնուէր. եւ կաւեղքնէն թէ յիշեալ դաւառին դործերուն կարեւորութեանը նայելով, Նորին բարձրութիւնը մինչեւ օգոստոսի 20-ը հոն կենալու եւ ետքն ալ տակաւին Բուսնի զանազան դաւառները պտըտելու գիտատրութիւն ունէր։

Պէրուէն օգոստոս 21-ը զըրված նամակ մը հետեւեալ լուրերը կուտայ։

“Օգոստոս 3/15-ին՝ որ Վաղդիւնացւոց Վ. Նաբոլէոն կայսեր տօնն էր, Պէրուէնի գաղղիական հիւպատոս Պէնթիօլիօ կոմսը մեծ կոչումը մը ըրաւ, որուն հրաւիրված էին բոլոր հիւպատոսները, օսմանեան տէրութեան եւ ուրիշ տէրութեանց նաւախուժներուն հրամանատարները, օգնութեան յանձնաժողովին նախագահ Վարո Էֆէնտին եւ ուրիշ գլխավոր պաշտօնատարներ։

“Այս կոչումը մէջ Վաղդիւնի հիւպատոսը Վ. Նաբոլէոն կայսեր կենդանութեանը բաժակ առաջարկելով, գաղղիացւոց ծովագետն ալ վեհափառ Սուլթանին կենացը առաջարկեց, եւ երեք անգամ Էֆէնտին Վաղդիւնացւոց, Էֆէնտին Սուլթանը գոչեցին բոլոր հանդիսականները։

“Յետոյ Սուլթան փաշա ծովապետը գաղղիացւոց կայսրուհւոյն կենացը բաժակ առաջարկեց, Նաբոլէոն հիւպատոսը գաղղիացւոց կայսրորդին, եւ վերջապէս Վաղդիւնի հիւպատոսը վեհափառ Պուստ փաշային կենացը եւ անոր պաշտօնին յաջողութեանը բաժակ առաջարկեց։

“Ընդոյ 7/19-ին Վ. Սեմ. Պուստ փաշային կողմանէ յատուկ հուրհանդակով հրաման եկաւ Վարո Էֆէնտին որ շուտով Սոյտա երթայ ու շրջականներուն ապահովութեանը միջոցներուն հրահեւէ։ Գնաց Վարո Էֆէնտին, զօրանոցներէ եւ ուրիշ տեղերը աչքէ անցուց, եւ իմացաւ մանրամասն քննութեամբ որ քաղաքն առժամանակեայ կերպով կառավարող Մէհմետ Էֆէնտին օրինաց եւ արդարութեան համաձայն կը վարվի, եւ քաղաքն ու շրջականները ապահովութեան մէջ են։

“Բայց Տիւրքի կողմը եղած Նէպոլեոն անուն նահանգին (գաղա) վեճակը քննելուն, իմացաւ ստուգեց Վարո Էֆէնտին որ լաւ չկառավարվիր եւ քանի մը զեղծումներ տեղի ունեցեր են, Սուլթանը պաշտօնէն ձգեր եւ իսպայէլ պէյը որ կարուկ եւ ուղղութիւն սերող անձ մընէ՝ Նէպոլեոն Սուլթան կարգէր է։

“Օգոստոս 8/20-ին Վարո Էֆէնտին

տին Սոյտա դարձեր էր։

“Վ. Սեմ. Պուստ փաշան Վամասուր մէջ իւր պաշտօնը ընկնելէ ետեւ Պէրուէնի պիտի գայ հոս տեղի յանցաւորները դատելու համար։

Նոյն քաղաքէն օգոստոս 28-ը զըրված նամակ մ'ալ հետեւեալ լուրերը կուտայ։

“Սորեստանի մէջ կատարեալ խաղաղութիւն կը տիրէ, բաց ՚ի Մեհմետ Էֆէնտին զի մը շփոթութիւն կայ կըսէ։ Վաղաքին փողոցներուն մէջ պատերուն վրայ փակած դռներ տեսնուելու է, որոնք տաճիկները կը հրաւիրեն եղեր քրիստոնեայիները ջարդելու։ Այս գրիւրը քանի մը սրիկայներու գործ կը համարվին որոնք անկարգութիւն հանել կուզեն։

“Վամասուրէն եկած վերջին լուրերուն ժամանակը վեհափաշա Պուստ փաշան դեռ կը շարունակէր քննութիւններն ու ձերբակալութիւնները։ Մնացեալները Վ. Պուստ խրկված 284 յանցաւորներէն դատ, այս օրերս դարձեալ 500-ի չափ տաճիկ խրկվեցան հոս, եւ ասկէ ալ շոգենաւ գրվելով Վ. Պուստ խրկվեցան։

“Իմացայ անուղղակի կերպով թէ վեհափաշ Պուստ փաշան՝ Մեհմետ Էֆէնտին Սուլթանին համար՝ քանի մը օր ազատ պիտի թողու յիշեալ ուսումնական տեղի մէջ անցնելու, եւ ինքը նոյն միջոցին Պէրուէնի պիտի գայ, ու նախորդ կուսակալ Սուրշուտ փաշային եւ ուրիշ բանտարկեալ պաշտօնատարներուն դատաստանը պիտի տեսնէ։

Վամասուրէն օգոստոս 23-ը զըրված նամակ մը կը ծանուցանէ թէ մահուան դատապարտեալ տաճիկներուն տունները կը քանդուին, եւ կերեւի որ յարժուին պիտի գրաւին ՚ի նպատակ մը առ կրող քրիստոնէից։

Ըմեն մէկ քրիստոնէի՝ օրը մէկ հաց եւ 50 փարա կը տրվի կառավարութեան կողմէն, աղայոց ալ 25 ական փարա։ Ըսանկով տանն եւ չորս օրուան մէջ՝ 738000 զուրուշի հաց, ստակ, ոտքի աման եւ զանազան պիտոյք տրվի է քրիստոնէից։

Պէրուէնի զըրված ուրիշ նամակներով վկայութեանը նայելով՝ Մեհմետ մէջ հասարակաց խաղաղութիւնը չէ աւելնիր բռնաւ, եւ քանի մը խաղաղարարներու գրգռելը գրուութիւններն արդիւնք մը չեն ունեցեր։ Նաբոլէոն մէջ ալ խաղաղութիւն ծաղկելու լուրերը հաստատութիւն չեն գտած։ Սուլթան թէ, վեհափաշ Պուստ փաշան զօրաց գունդեր խրկելու է Մեհմետ Նաբոլէոն եւ ուրիշ քանի մը տեղեր, որպէս զի խաղաղութիւնն ու ապահովութիւնը հաստատ մնայ, եւ անկարգութիւն հանելու յանդիմաններն անմիջապէս եւ խաղաղ պատժուին։

Շարաթ օրը Պէրուէնի հետեւեալ հեռագրական լուր եկաւ Վ. Պուստ։

“Պէրուէն 9 սեպտ. 1860

“Հիմա սուրհանդակ մը հասաւ հոս Վամասուրէն։ Նախորդ Միւշեր Մեհմետ փաշան, Հասպէյայի եւ Տէյր-Է-Վամարի զօրաց հրամանատար Օսման պէյ եւ Վափուկ Մեհմետ պէյ գնդապետները եւ ուրիշ ստանդարտ վարաստներն ունեցող պաշտօնակարներն հրացանի բռնելու են Վամասուր մէջ։

“Վ. Սեմ. Պուստ փաշան Վամասուրէն ելեր՝ Վապ-Լիւսա հասեր է, որ ասկէ 12 ժամու ճամբայ հեռու է։ Վաղն առտու Պէրուէնի պիտի մտնէ։ Փառաւոր ընդունելութիւն մը կը պատրաստվի իրեն՝ վեհափառ Սուլթանին երեսփոխանն ըլլալուն համար։

Օգոստոս փաշան ինքնակալ Նէպոլէոնի մեծահամբաւ Վափուկ-Վափուր Էֆէնտին առաջին կարգի Մեհմետի պատուանշան շնորհեց՝ Վամասուրի անցքերուն ժամանակը ըրած արիական ջանքերուն եւ հաղթարար քրիստոնէից կեանքը ազատելուն համար։

Նորին Վ. վեհափառութիւնը Վ. խափնի կայսերական բանակին քաղաքական գործակատար (աժան բօլիթիք) Սուսանդեան մեծարդոյ Սուսանդ Էֆէնտինին եւ նոյն բանակին բժշկապետ Պէլիզար Պէյին Մեհմետի պատուանշան շնորհեց ՚ի վարձատրութիւն իրենց փութածան եւ հաւատարմութեան ծառայութեան համար։

Նորին կայսերական վեհափառութիւնը նաեւ Վ. անայ առաջնորդ Վեհափաշ ինքնակալ վարդապետին չորրորդ կարգի եւ նոյն քաղաքի հայոց երեսփոխանին Սապոնձեան մեծարդոյ Հայրապետ աղային եւ Պիթիլիկեան Սահակ աղային հինգերորդ կարգի Մեհմետի պատուանշան շնորհեց։

Կայսերական հրամանաւ՝ Վ. Վրան արտաքին գործոց պաշտօնատան օտար լեզուաց թղթակցութեան գիւնդին անդամ մեծարարութեան Վրիգոր Էֆէնտինին նոյն գիւնդին գլուխ անուանեցաւ։

Բրուսելայի տէրութեան Պէպին մայրաքաղաքը նստող օսմանեան դեսպան Միստաքի Պէյը առաջին կարգի երկրորդ աստիճանի պաշտօնատար անուանեցաւ։

ԱՋԳԱՅԻՆ

Աղային Վաղաքական ժողովոյն անդամ ընտրված յարգելեաց երեքէն աւելին բանաւոր պատճառաւ հրաժարելով, Աղային Սահմանադրութեան համեմատ անոնց տեղ ուրիշ անձինք ընտրելու համար այսօր ընդհանուր ժողով կը գումարի Պատրիարքարանը։

Վալիւթայի թիւերնու մէջ համաօտիւ ծանուցեր էինք թէ երբեմն հայ վարդապետ եւ հիմա բողոքականութեան յարեալ Պ. Խարայէլը՝ բողոքականաց Մեհմետը լրագրին եւ Մեհմետը Հալիպոլի միջոցաւ բողոք հրատարակելէ աղային Պատրիարքարանին եւ լրագրոյ գէմ, որպէս թէ իր վրայ զրպարտութիւն ըրեր են, եւայն, եւայն, եւ տասնիստ տալու ներկայ թիւերնու մէջ։

Մեր խաղաղութեան խնդիրները եւ լուրերն կատարելու համար՝ պարտք կը համարվիք նախ մեր արդար ընթերցողաց աչքին առջեւ դնել Պ. Խարայէլին բողոքային նամակը որ Մեհմետը հրատարակելն ուղղած է, եւ անալ նոյնութեամբ եւ ամբողջ հրատարակած է։

Մեծարարութեան հրատարակելու Միստ Լուրին միջոցաւ օգոստոսի 18-ամ տոթուով մեր վրայ ամբաստանութիւն մը հրատարակուել էր, իբրեւ թէ Միստի աստութեան նայելով ծանր յանցանք մը ըրած ենք։

Եղեր, եւ կրօնական ժողովը կրօնելով երկար քննութիւններէն ՚ի զատ հոն տեղ մեր խոստովանութեամբ ըսած յանցանքը որպէս թէ ըստ սուրբաւոր է եղեր մեր վրայ։

Ահա Վալիւթայի պատուական լրագրոյ միջոցաւ (եթէ կը բարեհաճիք) կը պատասխանեմ բողոքներով այսօր, եւ երբ եւ իցէ ՚իւր բողոք Հայոց աղայի, եւ ամենայն մարդկան, որ Միստի հրատարակած ամբաստանութիւնը բողոքովն սուտ է, զրպարտութիւն է, եւ անխառն անտեղի եւ անստույգ շարժապիտութիւն։ Վ. անայ զի մեք ու եւ իցէ յանցանք մը (Տէր մի արասցէ) ունեցած չեմք, եւ կրօնական ժողովն ներկայութեամբ քննութիւն մը եղած չէ մեր մասին, եւ մեք այսպիսի յանցանք ունենալ խոստովանած չեմք եւ ոչ մէկ կեղծակ ստուգուած ալ չէ մեր վրայ։ Եւ հետեւաբար՝ մինչ զի դատախազ մը անգամ ուր եւ իցէ մեզ ներկայ ժողով մը տեսնել չեմք տեսնել մեր իսկ աչքը, որուն հետ եթէ հարկ ըլլար նէ դատուէինք, եւ փախստական ալ չէ եղեր ինչպէս Միստի կը ծանուցանէ. ուստի եւ կրօնական ժողովը զինքը իւր կարգին լուծելու ըսելով իրաւունքն ամենեւին դուր է,

Եւ արդ՝ ահա Վալիւթայի ամենուն կը ծանուցանեմք մեր կողմանէ, եթէ այսպիսի յանցանք մը ունեցնէ, խառն յանձնարարական ժողովն ներկայութեան քննելու դատուելու մեք մեզնի կամար պատրաստ եմք։

Բարձրագոյն Տէր, բողոքելով եւ ծանուցանելով զայս Ձեր վեհափառութեան, եւ ՚ի ձեռք Ձեր ամբողջ Հայրապետաց խնայման ինչպէս անգին կենացդ արթարար։

Խարայէլ Էֆէնտին * Թաւ
Ի Պէպէ, 1860, օգոստոսի 21։

Այս զարմանալի բողոքը կարդացողները՝ թէ որ տակը Պէպէ բառը չտեսնէին՝ անշուշտ պիտի կարծէին թէ Պ. Խարայէլը Վալիւթայի երկրեցւոյն խուցէն կամ Միստի վանքէն գրած է. վաղն զի այնպիսի խօսքեր ու առաջարկութիւններ կան մէջը, որոնք իր երկրեցւոյն ուրացող, իր կարգին եւ ուսման զրգող եւ իր հոգեւոր գիւնէն ու աղգէն ապրատալով անձի մը՝ մանաւանդ կրօնաւորը մը անհամար էր ընել։ Այս հայտնի է ու հայոց Պատրիարքը կը ծանուցանէ եւ ու պատրիարքը. եւ Էֆէնտին թէ ըսելով երթալ Պէպէ բողոքականաց զպրոքը նստիլ եւ հոնկէ Հայոց աղային ու Պատրիարքարանին առաջարկել թէ ինչ խօսք պարտաւոր է, եթէ այնպիսի յանցանք մը ունեցնէ, խառն յանձնարարական ժողովն ներկայութեան քննելու դատուելու մեք մեզնի կամար պատրաստ եմք։

Կատարի կրնես թէ կը դառնացես, Պ. Խարայէլ։ Թաւ որ ունի յանցաւոր չէիր, թէ որ անմեղութեանը վրայ վստահ էիր, ինչպէս յանձն չառիր դատախազի հետ դէմ առ դէմ գալ՝ երբոր քեզ առաջարկեցաւ

Բայց խորհրդածութիւնները ետքի ձեռքը եւ նախ կրօնական ժողովին ատեն նազրութիւններն աչքէ անցունենք։

Այս վաւերական գրութիւնները կը վկայեն թէ ամենապատիւ Սրբազան Պատրիարքը հայրը կրօնական ժողովոյ անդամ երկու երեսեկ վարդապետներու ներկայութեամբ խարայէլ (վարդապետը) կանչել, իրեն դէմ եղած ըստորադրեալ բողոքը իրեն հաղորդել է։ Ինքը նախ ուրացիր է իր յանցանքը՝ զրպարտութիւն է ըսելով. բայց երբ

* Այս ստորագրութիւնը նամակագրին այժմեան վեճակին նայելով՝ զօրմանակ հակառակութիւն մընէ, որ չիւրար համաձայնիլ ոչ ՚ի ինքնի Հեղաշրջութեան ըրած այն յայտարարութեանը հետ թէ Պ. Խարայէլը ներքին համադմար ընդունած է բողոքական կրօնը, եւ ոչ Մեհմետը կրօնական կարծեսցը հետ, որ Մեհմետը արտաքին կրօնական պաշտօնեայ չմանաւոր եւ բողոքականութեան մէջ չընդունվի։ Ստիպայ՝ միայն բաւական ապացոյց մըն է որ Պ. Խարայէլն բողոքականութիւնը կը զի եւ ներքին համադմար չէ, հետեւաբար ինչպէս Հեղաշրջութեան ըրած յայտարարութիւնն ալ անհիմն է։

որ Ս. Պատրիարքն առաջարկել է իրեն, որ եթէ իր անմեղութեանը վերայ կը լստահի, դատարանը* բերվել եւ անոր հետ երեսն առ երեսն խօսելով իր անմեղութիւնը հաստատէ. որով ոչ միայն ինքը արդարանայ, այլ եւ ամբաստանողն ալ խտրել պատժով եկեղեցական անձի մը վրայ այնպիսի ծանր զոյգարարութիւն մը ընելու յանդգնելուն համար:

Ասկէջ աւելի յարմար առիթ կրնար ըլլալ Պ. Խորայէլին իր անմեղութիւնը յայտնելու. բայց ինքը սկսել է մտածել, եւ վերջապէս դատարանին հետ դէմ առ դէմ խօսելու չհամարձակելով ինքզինքը Ս. Պատրիարքին տնօրէնութեանը յանձնել է:

Ս. Պատրիարքն ալ ժողովական վարչապետաց հետ խորհելով իմացուցել է իրեն թէ կրօնաւորական ուխտերուն զըլխաւոր մէկ կէտին այսինքն ողջախոհութեան դէմ մեղանշած ըլլալուն համար պէտք է որ ապաշխարութիւն յանձն առնուի. իսկ եկեղեցական կանոնաց, եւ մայրաքաղաքէս հեռու վանք մը քաշվի, որպէս զի թէ ինքը առակ նշաւակի չըլլայ հոս կենալով եւ թէ ժողովուրդը զայն թախտութեանէ պահպանվի:

Խորայէլ (վարդապետը) դոհութեամբ յանձնառու կըլլայ այս տնօրէնութեան, եւ կը խնդրէ որ Երմաշու վանքը երթայ:

Ս. Պատրիարքը՝ ալ աւելի առաջ տանելով բարեկրթութիւնն ու յանգաւորին պատիւը պահպանելու հոգածութիւնը, կառաջարկել է իրեն, որ իր յօժարութեամբ Երմաշու վանքը երթալու խնդրագիր մը գրէ՝ տայ, եւ այն խնդրագիրն համեմատ հրամանագիր մը առնելով երթայ, որպէս զի պատուաւոր հիւրընկալութիւն մը դանձ վանքին մէջ:

Ինքն ալ շնորհակալ ըլլալով, անմիջապէս հետեւեալ խնդրագիրը կը գրէ:

Ամենապատիւ սրբազան Տէր Իմ.
Ամենական վատարող թիւնս ինձ չ'ներել քարոզութիւն ընել. այս մասին կաղաչմ, մեզ հրաման ընէք առժամանակ մը Երմաշու տուր Լատուածածնայ վանքը երթալ օգտօնութիւն ընելու:

Ս'նամ բարձրագոյն բարեհաճութեան ձեռքով, եւ յաւատարմութեամբ երախտագործեալ
1860. յուլիսի 17 Խորայէլ վարդապետ
Ի. Պ. Պոլսոյ: Թաղ: Կաթողիկոս:

Եւս խնդրագիրը Ս. Պատրիարքին տալէն ետեւ, հրաման կը խնդրէ երթալու ձամբու պատարասութիւն տեսնելու, եւ հետեւեալ առաւօտուն նորէն Պատրիարքարան դառնալով հրամանագիրն առնելու եւ անմիջապէս ձամբայ երթելու: Պատանայ հրամանը, Պատրիարքարանէն դուրս կելլէ, Կառլ-գաբու կերթայ եւ զիշերը հոն մնալով, առաւօտուն՝ փոխանակ Պատրիարքարան եւ անկէջ ալ իւր խոստմանը համեմատ շոգենաւ երթալով բողոքականաց աղագականին կերթայ ու կրօնքը կը փոխէ:

Խորայէլ (վարդապետին) այս վարձուներէն վրայ, Ս. Պատրիարքը պարտաւորեցաւ եղելութիւնը Առժամանակեայ Վարդապետական ժողովին ծանուցանելու: Վարդապետական ժողովն ալ իր յուլիս 21 նստին մէջ յանձնաժողով մը կազմելով՝ վերոյիշեալ պատանին հարցաքննելու խիստ մանրամասն կերպով: Հետեւ

եալ օրը Ս. Պատրիարքը եկեղեցականաց ժողով դուռնաբերով, եղելութիւնը անոնց առջեւ դրաւ: Անոնք ալ վերստին յատեան կողեցին ամբաստանող պատանին եւ երկար բարակ հարցաքննելէ ետեւ՝ վճռեցին որ Խորայէլ (վարդապետը) ինքնակամ իր ուխտին դրժելէ ետեւ իր եկեղեցին ալ ուրացած ըլլալով, լուծեալ է իւր եկեղեցական կարգէն, հետեւաբար, թէ եւ օր ըլլայ ու նորէն վերադառնայ մեր եկեղեցին, լոկ աշխարհական պէտքէ ծանչցով:

Եւս վճիռը՝ մէկ եպիսկոպոս, եօթն վարդապետ եւ ութ քահանայ իրենց ստորագրութեամբ վաւերացրէն ետեւ, հետեւեալ կիրակի օրը կարգացվեցաւ մայրաքաղաքիս բոլոր եկեղեցիներուն մէջ:

Արձանական ժողովին ատենագրութեանցը մէջ ասոնք մանրամասնաբար պատմութեամբ ըլլալէ զատ՝ պատանին հարցաքննութիւնն ալ ամբողջ արձանագրութեամբ է, բայց մեզ 'ի պատիւ համեմատութեան արժան չենք համարել դանձնք հոս հրատարակել:

Սա ալ կը պատմեն մեզի թէ Պ. Խորայէլը Պատրիարքարանէն Կառլ Պաբու գացած իրիկունը՝ տեղւոյն եւ կեղեցականներուն զանգատ ըրելէ թէ իր վրայ զոյգարարութիւն մը ըլլալով, Երմաշու վանքն երթալու հրաման եղած է իրեն: Ինկեղեցականները միամտութեամբ կարեկից ըլլալով խորհուրդ կընեն որ հետեւեալ օրը Պատրիարքարան երթան բողոքեն, եւ որպէս թէ անմեղին պաշտպանութիւն ընեն: Եւս մտք առաւօտուն շոգենաւ կընստին Պ. Խորայէլին հետ, ու Պառմ Պաբու կերթան: Երբոր ցամաքը կըլլէ, Պ. Խորայէլը կերպով մը դանձնք կը ձամբէ, եւ ինքը փոխանակ Պատրիարքարան երթալով՝ բողոքական ըլլալու կերթայ:

Ինչ պիտի ըսէ Պ. Խորայէլը այս պատմութեանը համար: Արնայ ըսել թէ սուտ եւ չինձու են: Արնայ ըսել թէ Ս. Պատրիարքն ու ժողովականները խօսք մէկ ընելով քովիսնուն հնարք են: Արնայ այսուհետեւ հաւատարմութիւն մէկու մը թէ իր վրայ զոյգարարութիւն եւ դած է, երբոր ինքը չ'ուզած իր դատարանին հետ դէմ առ դէմ գալ: Ինչո՞ւ չհամարձակեցաւ այն ժամանակը, եւ ինքզինքը Ս. Պատրիարքին տնօրէնութեանը յանձնել: Ասիկա իր յանցաւորութիւնը խոստովանել չէր մի: Ինչո՞ւ ընդունեց Երմաշու վանքն երթալու որոշումը, եւ փոխանակ բողոքելու, դատարանին խնդրելու եւ իր իրաւունքը ցոյց տանելով՝ վերոյիշեալ խնդրագիրը գրելը տրուաւ: Հնար է հաւատալ, որ իր անմեղութեանը վրայ վատահեղձ եւ իր պատուոյն նախանձախնդիր անձ մը այսպիսի ծանր զոյգարարութեան մը ամենափոքր կասկածն անգամ իր վրայէն սրբելու համար չպողայ, չբողքէ, իր զոյգարարչութեան հետ չմտաբախի եւ ամեն օրինաւոր միջոցներու չփնտռէ:

Պ. Խորայէլ ինչ ըրաւ, յանցանքը վրան առաւ, մայրաքաղաքէս հեռանալու եւ վանք մը քաշվելով ապաշխարելու խօսք տուաւ եւ խնդրագիր մը ստորագրեց, աղատ համարձակ դուրս ելաւ: Պատրիարքարանէն եւ հետեւեալ օրը դնաց բողոքական եղաւ:

Հիմա ալ կ'եր "խառն յանձնաժողովն մը ներկայութեամբ քննուիլ եւ դատուիլ մեք մեզին կամակար պատրաստ եմք", կըսէ:

Ուշ մնացել, Պ. Խորայէլ. այսուհետեւ աղղր ոչ յանձնաժողով կը կազմէ քեզի համար, եւ ոչ քու վրայօքը խօսք մտիկ կընէ: Ամէն էս, ինքզինքը արդարացրէն կուզես, կը վատահիս ինքզինքիդ, դնա՞ տեսութեան դուռը, եւ հոն դատարանիդ հետ երես երեսի գալով՝ դատ վարէ, պատիւ փնտռէ: Պուն քու դատը կորսնցուցած ես աղղին առջեւ՝ քու դուրսիդ եկեղեցիդ ուրանալով: Աղղը քեզ չ'անչնար այս սուհետեւ:

ԽԱՐԵԼ ԼՈՒՐԵՐ

Հանգուցեալ Պանիկամիրայի լծակից մեծապատիւ Երբգուհի Թիկինը կիրակիէն երկուշաբթի լուսնալու զիշերը իւր մահկանացուն ընթացքը կընելով, հետեւեալ օրը՝ երկուշաբթի՝ յուրաքանչեւ Երբգուհի կատարվեցաւ մեծ հանդիսիւ, եւ մարմինը Օրթոգիւղ իր ընտանեաց հանգստարանը թաղվեցաւ:

Պ. Պոլսոյ բանակին չորրորդ գունդին հրաման եղաւ որ Երբգուհիին երթալու պատրաստուի:

Թուրքիոյ ու Եւրոպիոյ դաղըրական զեւպաններուն ձգել երթալուն լուրը՝ որ լրագրոյս առաջին երեսին մէջ ծանուցած ենք, գէշ աղղեցութիւն մը ընելով մայրաքաղաքիս մէջ, փոխանակութեանց քրաժող զիններ մէկէն 'ի մէկ այնպէս բարձրացան, որ երկուշաբթի օրը Պորսային մէջ գործողութիւն չընդացաւ ըլլալ. բայց երեքշաբթի օրը Լոստրայէն խաղաղական հեռադրաւոր մը գալով սիրտերն հանդարտիլ սկսան: Արհաստատեն թէ Թուրքիոյ ու Եւրոպիոյ դաղըրական զեւպաններուն Պաղլիա դառնալը իրենց խնդրանքն եղած է առժամանակեայ կերպով, եւ քաղաքական պատճառ մը չունի:

Այս քաղաքիս Իհթիսայի պաշտօնատանը օգտակար տնօրէնութիւն մը ըրաւ պակաս կշռով ուտելիք վաճառողներուն դէմ: Եւսուհետեւ ով որ պակաս տալու ըլլայ, ամեն մէկ տըրաւ պակասի համար մէկ արծաթ Մէճիտիէ քան զուրուշնոց տուգանք պիտի վճարէ:

Իզմիրի Իհթիսայ լրագրիւր ըրաւ կուտայ թէ օգոստոս 28 ին կիրակի զիշերը յիշեալ քաղաքին մէջ կռիւ մը եղի է տեսութեան զինուորներուն եւ խեղ մը ստորին կարգի յոյներու մէջ:

Այս զիշերուան մօտ՝ քաղաքին բոլոր արձարանները զոգցվէն ետեւ՝ մէկը դեռ բաց մնացել է, եւ դրանը առջեւ ալ մեծ ջահ (մաշալ) մը վառած է զիշեր, որ նոյն միջոցին փչած հովին սաստկութեանը նայելով կրնար փառագաւոր ըլլալ:

Տեսութիւնը քանի մը անգամ կը հրաւիրէ արձարանին վարպետը որ ջահը վերցնէ եւ խանութը բացէ: Արձարարծը մտնի չենք: Այս զիշերը կայնի եւ արձարանը դեռ բաց է եւ ջահն ալ կը վառուի:

Քործած յանցանքը անպատիւ անցուց: Մեր այս բաժնին տպագրող կրնայ համարվել այս անգամ միջնորդներ իրիկը Արագան Պատրիարքին որ զինքը ընդունի իրեն եկեղեցական եւ ժամանակաւոր ազգայնորութիւն մը դնէ վրան սրուն յանձնառու պիտի ըլլայ եղբ, բայց չ'ընդունվեցաւ:

Եւս ժամանակը տեսութեան զինուորները կերթան ու ջահը իրենք մաքրելու կ'սկսին: Նոյն միջոցին մարդ մը արձարանէն դուրս կը յարձակի ու տեսութեան զինուորներուն մէկուն սուրը քաշելով՝ անոնց հրամանատարը զարնել կուզէ: Օրինուորները կը բռնեն զանիկա ու բաւար տանել կուզեն: Հանկարծ արձարանին մէջ դռնը վող մարդիկ դուրս կը վազեն աթոռակներով, փայտերով, զանակներով ու սուրերով զինեալ, եւ տեսութեան զինուորներուն վրայ յարձակելով բռնված մարդը ազատել կուզեն: Ասկէջ կուր կը մեծնայ, եւ ուրիշ սրիկայ յոյներ ալ վրայ կը հասնին: Տեսութեան զինուորներուն հրամանատարը տեսնելով որ գործը շատ պիտի դէշնայ, բռնված մարդը թող կուտայ:

Եւս կուր մէջ՝ տեսութեան զինուոր մը վառագաւոր կերպով կը վերաւորվի, ուրիշ երեւ զինուոր ալ դանակի հարուածներ կուտան: Իսկ յարձակողներուն կողմէն՝ տեսութեան զինուորն սպաննել ուղղորդուին մէկը տարձանալով կը զարնվի կը մեռնի, ուրիշ մընալ կը վերաւորվի:

Եւս անցելի վրայ, նոյն զիշերը մէնչեւ լուս գորաց խուճեր պտուտը են քաղաքին մէջ եւ կուսական ալ հետեւեալ օրը քաղաքին ամեն կողմը պտուտելով բարեկարգութեան հաստատ մնալուն հըս կեր եւ խաղաղասէր բնակաց սիրտն հանգարտեցուցի է:

Անէն մեր արգոյ թղթակիցը ըրաւ կուտայ թէ օգոստոս 7 ին իրիկունը ահազին փոթորիկ մը ելելով՝ հեղեղանման անձրեւներ եկել, եւ քաղաքէն ժամ ու կէս ձամբայ հեռու Ծրվատան ըսված հայաբնակ գեղը որ ձորակի մը մէջ է եղեր՝ լեռներէն դետուրու պէս լիճած ուղեներէն կոխվելով, տանն հայոց տուն հիմնայատակ եղեր եւ եօթն հողի ալ խզղըվեր են:

ԾԱՆՈԹՅՈՒՆ

Անցեալ ուրբաթ օրը Թաղ: Կաթողիկոս լեռն Մանուկ աղան Պալատիա գեղին թղթապանակ (ճշուր) մը կորսնցուցած է որուն մէջ մուրհակներ, քօնթրաթներ, եւ այլն կային:

Եւս թղթապանակը դանդոն յիշեալ Մանուկ աղան 250 դուրու վարձք խոստանալով՝ կը խնդրէ որ տանի Բէրշեմպէ-քաղաքը՝ Բէրշեմպէի փողոցը թիւ 14 իր մաղաղան յանձնէ, եւ հոն կէց անմիջապէս ընդունի 250 դուրու շք:

ԾԱՆՈԹՅՈՒՆ

Միւսն օղու Պ. Գովաթիին Պառմ փանիայէն առնելը ունեցողներուն իմաց կը տրվի որ այս օրէն սկսեալ՝ մինչեւ 21 օր պարտաւորեալ են իրենց առնելը ազգացուցանելու (խալաթ ընելու) յիշեալ անձին Միւսիքներուն առջեւ, ուրոնք ամեն օր մայրաքաղաքիս շուկան Օրնիքի խանութի 1 սենեակը կը գուս մարվին:

8 սեպտեմբեր 1860

ԾԱՆՈԹՅՈՒՆԸ

Օ ՖԻՆԱՆՍԷՐ

Մալ եւ փող: Երբեք: Եւ:

Մինչեւ հիմա հնարված ջուրերուն

* Վատարանը՝ որ պատանին մէն կը իր դուռը բողոքէ Ս. Պատրիարքին տեղապահին տալէն ետեւ, Ս. Պատրիարքին առջեւ հանգիւր երկար բարակ հարցաքննվել է քանի մը եկեղեցականներու ներկայութեամբ:

* Հաւանականաբար նոյն մտքը՝ որով քանի մը տարի առաջ ալ իր մէկ ուրիշ անարժան վարձուներին պատճառաւ դնաց հոռութեան եղաւ եւ բարեկեր անձի մը միջնորդութեամբ քանի մը օր ետքը վերստին դարձաւ եկաւ, ու ասանկով իր

Ի ՏՊԵՐԸՆԻ ՄԵՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ